ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ---------- /Ա. Պետրոսյան/ «01.09.2023 թ. »

Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

Երևանի Համբարձում Գալստյանի անվան թիվ
83 ավագ դպրոց
11^4 դասարան
Դասղեկ՝ Հ. Արշակյան

2023-2024 ուստարի

Կրթական - դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) 11[4] դասարանում սովորում են 25 աշակերտ (15 տղա, 10 աղջիկ): Աշակերտները հիմնականում միջին ընդունակությունների տեր են, ովքեր սովորում են իրենց ուժերի ներածի չափով: Կան նաև շատ լավ սովորողներ: Բոլորը կազմակերպված են, կարգապահ, ընկերասեր: Դասարանում տիրում է առողջ, ողջունող մթնոլորտ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ. Ուսումնադաստիարակչական նպատակով անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել աշակերտների վարքը, կարգապահությունը և ուսման առաջադիմությունը: Մշտապես կապ հաստատել ծնողների հետ, տարվա ընթացքում հրավիրել ծնողական ժողովներ: Ցածր առաջադիմություն ունեցող և անկարգապահ աշակերտների հետ աշխատել առանձին, նշված թերությունները շտկելու նպատակով: Աշակերտների հետ աշխատելիս հաշվի առնել անցումային տարիքի առանձնահատկությունները:
Նպաստել աշակերտների բազմակողմանի կարողությունների զարգացմանը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն.** Աշակերտներին ծանոթացնել հայկական ավանդույթներին, խորացնել սերը և հարգանքը սեփական կրոնի հանդեպ, ակտիվացնել հետաքրքրությունը հոգևոր արժեքների նկատմամբ: Այդ նպատակով կազմակերպել էքսկուրսիաներ դեպի պատմամշակութային կոթողներ, եկեղեցիներ...

3.2 **Գեղագիտական դաստիարակություն.** Այցելել թանգարաններ, ցուցահանդեսներ, թատրոններ, համերգներ, դիտել օպերային և բալետային ներկայացումներ, ֆիլմեր, որից հետո կազմակերպել զրույց քննարկումներ: Աշակերտների մեջ սերմանել գեղեցիկի հանդեպ ուշադրության և սիրո դրսևորում, զարգացնել շրջապատում և մարդկանց մեջ գեղեցիկը նկատելու և արժևորելու ունակությունը:

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն.** Այս նպատակով աշակերտների դաստիարակության հիմքում դնել «Հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուրիս սուրբ գործն է» գաղափարը: Աշակերտը պետք է ճանաչի, հիշի հանուն հայրենիքի իրենց կյանքը զոհած քաջերին, ոգեշնչվի նրանց հերոսությամբ: Այցելել եռաբլուր:

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն.** Նպաստել, որ աշակերտը կարևորի ամենօրյա ֆիզիկական վարժանքները և անպայման ակտիվորեն կատարի դրանք, զբաղվի մարմնակրթությամբ, ֆիզկուլտուրայի դասերին հաճախի համազգեստով, ցուցաբերի ակտիվություն, մասնակցի կազմակերպվող սպորտային տարբեր մրցումների:

3.5 **Աշխատանքային դաստիարակություն.** Զևավորել սեր և հարգանք աշխատանքի ու աշխատասեր մարդու հանդեպ: Բացատրել սովորողներին «Չաշխատել, նշանակում է չապրել» ասույթի իմաստը, և ուղղորդել, որպեսզի նրանք իրենց կյանքում այն դարձնեն կարգախոս:

3.6 **Բնապահպանական դաստիարակություն.** Զարգացնել շրջակա միջավայրի և բնության հանդեպ ուշադիր, հոգատար և խնայողական մոտեցում դրսևորելու գիտակցությունը: Ծանոթացնել արդի էկոլոգիական հիմնախնդիրներին: Հորդորել, որպեսզի ակտիվ մասնկցություն ցուցաբերեն կազմակերպվող շաբաթօրյակներին, ծառատունկներին:

3.7 **Դպրոց-ընտանիք կապը.** Պահպանել սերտ կապը ծնողների հետ, ներգրավել նրանց իրենց երեխաների հետ տարվող աշխատանքներին, անցկացնել ծնողական ժողովներ, անհրաժեշտության դեպքում առանձին հանդիպումներ, զրույցներ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնական շաբաթներ	Ուսումնակադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	Գիտելիքը հագուստ է, որը երբեք չի մաշվում	06.09	Դասղեկ
2	Կուզեի նմանվել...	13.09	Դասղեկ
3	Ազատ, անկախ Հայաստան	20.09	Դասղեկ
4	Վիկտոր Համբարձումյան - 115	27.09	Դասղեկ
5	Ուսուցիչը դերը իմ կյանքում	04.10	Դասղեկ
6	Ես և իմ շրջապատը	11.10	Դասղեկ
7	Գնահատիր ինքդ քեզ	18.10	Դասղեկ
8	Էկոլոգիական խնդիրները և մենք	01.11	Դասղեկ
9	Ազգ և պետություն	08.11	Դասղեկ
10	Հանդուրժողության միջազգային օր /16.11/	15.11	Դասղեկ
11	Կարո՞ղ եմ քեզ օգնել	22. 11	Դասղեկ
12	Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես	29.11	Դասղեկ
13	Կարողանու՞մ եմ արդյոք ներել	06.12	Դասղեկ
14	Ինչ եմ անում առողջ ապրելու համար	13.12	Դասղեկ
15	Սիրում եմ Ամանորը	20.12	Դասղեկ
16	Ես էլ քեզ նման եմ	10.01.2024	Դասղեկ
17	Համակարգիչ, թե՝ գիրք	17.01	Դասղեկ
18	Ի՞նչ կանեի, եթե...	23.01	Դասղեկ
19	Ինքնագնահատման կարողություն	30.01	Դասղեկ
20	Ծնող- երեխա հավերժական հակասություն	07.02	Դասղեկ
21	Եկեղեցական տոները մեր կյանքում	14.02	Դասղեկ
22	Բարեկամներ և թշնամիներ	21.02	Դասղեկ
23	Զգացմունք, գիտակցություն, ո՞րն է առաջնային իմ կյանքում	28.02	Դասղեկ
24	Մեր տան ճրագն է մայրս	06.03	Դասղեկ
25	Կրթական բարեփոխումներ... Լավ և վատ կողմերը իմ կարծիքով	13.03	Դասղեկ
26	Ջուրը և մեր մոլորակը	20.03	Դասղեկ
27	Գեղեցիկի ընկալում	03.04	Դասղեկ
28	Սեփական կարողությունների հստակեցում	10.04	Դասղեկ
29	Ցեղասպանությունը և աշխարհը	17.04	Դասղեկ
30	Հերոսական մայիս	08.05	Դասղեկ, պատմ. ուսուցիչ
31	Բնական պաշարներ... Ինչպե՞ս ենք օգտագործում	15. 05	Դասղեկ
32	Որքանո՞վ եմ ինձ համարում մեդիագրագետ մարդ	22.05	Դասղեկ, ինֆորմատիկայի ուսուցիչ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը, ամիսը, տարն	Անցկացվող միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
19.09. 2023	Ամկախությունը պետության ամրապնդման խորհրդանիշ /զրույց/	
18.10. 2023	Ուսուցիչ – աշակերտ փոխհարաբերություններ /զրույց/	
21.11. 2023	Հավերժ փառք մեր հերոսներին / զրույց/	
07.12. 2023	Աղետները որպես բնության արհավիրք /ֆիլմի դիտում երկրաշարժների վերաբերյալ, քննարկում/	
12.01. 2024	Ազնվությունն ու անկեղծությունը հոգու հայելի /զրույց/	
13.02. 2024	Եկեղեցական տոները մեր կյանքում /զրույց/	
07.03. 2024	Մայր իմ անուշ ու անգին / բանաստեղծությունների ընթերցում/	
02.04. 2024	Իմ աջակցությունն ընտանիքիս /զրույց/	
10.05. 2024	Կառողանու՞մ եմ արդյոք ներողություն խնդրել /զրույց/	

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը, ամիսը	Քննարկվող հարցերը	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
	Ծնողական խորհրդի և ծնողկոմիտեի նախագահի ընտրություն: Կազմակերպչական հարցեր		
	Նախակիսամյակի ներկայացում Ընթացիկ հարցեր		
	Կիսամյակի ամփոփում Ընթացիկ հարցեր		
	Նախակիսամյակի ներկայացում Ընթացիկ հարցեր		
	Կիսամյակի ամփոփում Էքսկուրսիայի կազմակերպման հարցեր		